ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2 սեպտեմբերի 2014 թվական **N 45-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ « ՀԱՐԹԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱԳՐՈՒՄ, ՀԱՆՁՆՈՒՄ - ԸՆԴՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014թ. սեպտեմբերի 1-ի <<Հարթաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ընտրության՝ օրենսդրության պահանջների համապատասխանության և ընտրված տնօրենի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու մասին N 132-Ա որոշման, **կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1. 2014թ. սեպտեմբերի 2-ից լուծել << Հարթաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար Սիրազարդ Մկրտչյանի հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

2.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հարությունյան Հայկ	Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Ասատրյան Նորա	Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ
Պողոսյան Նվեր	<<Հարթաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրեն (ընդունող)
Մկրտչյան Սիրազարդ	<<Հարթաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ տնօրենի պաշտոնակատար (հանձնող):

3. Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

4.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Ս. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. սեպտեմբերի 2
ք. Կապան